



# ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Պատմամշակութային հուշարձանները մեր ժառանգությունն են: Առանց դրանց անհնար է պահպանել պատմական հիշողությունը: Յուրաքանչյուր մարդու անմիջական պարտականությունն է պաշտպանել եւ հոգ տանել դրանց մասին:

Մինչ հուշարձանի տարածք այցելության կազմակերպումը՝ աշակերտներին անհրաժեշտ է ներկայացնել եւ մեկնաբանել պատմության եւ մշակույթի հուշարձանների բնագավառի հիմնական հասկացությունները՝ հուշարձանը որպես տեսարժան վայր, մշակութային արժեք, դրա պահպանությունը, խնամքը/վերականգնումը, օգտագործումը, նշանակությունը եւ դերը մեր կյանքում:

## ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐՆ ԵՆ՝

- ◆ չի կարելի վնասել, քանդել, աղտոտել հուշարձանները եւ դրանց տարրերը, ներկել կամ թողնել նրանց վրա արձանագրություններ եւ փորագրություններ
- ◆ չի կարելի բարձրանալ, քայլել, նստել հուշարձանների վրա, օգտագործել դրանք որպես սպորտային կամ խաղային օբյեկտներ
- ◆ չի կարելի հավաքել, փորել, հանել հուշարձանի տարածքից ինչ-որ իրեր եւ քարեր
- ◆ չի կարելի խանգարել էքսկուրսավարների, հուշարձանը սպասարկող աշխատակիցների եւ վերականգնողների աշխատանքը
- ◆ չի կարելի հուշարձանների տարածքում աղմկել, միացնել բարձր երաժշտություն, վառել խարույկներ, կազմակերպել խնջույքներ եւ այլն
- ◆ չի կարելի առանց թույլտվության կատարել ինքնակամ պեղումներ

## ԻՆՉՊԵՍ ԽՆԱՍԵԼ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ՝

- ◆ անհրաժեշտ է հուշարձանները լվանալ միայն ջրով՝ բացառելով այլ նյութերի օգտագործումը (մետաղական արձաններն անհրաժեշտ է լվանալ միայն ջրի շիթով, նույն մոտեցումը պետք է կիրառել քարե արձանների դեպքում, հատուկ դեպքերում բազալտի պարագայում կարելի է կիրառել մետաղական խոզանակ, տուֆի դեպքում՝ փափուկ խոզանակ)
- ◆ անհրաժեշտ է մաքրել հուշարձանի տարածքում առկա աղբը
- ◆ անհրաժեշտ է հուշարձանի վրա բուսածածկույթի առկայության դեպքում այն հեռացնել զգուշությամբ, հեռացնելու ընթացքում փլուզման վտանգի պարագայում ձեռնպահ մնալ նշված գործողությունից
- ◆ անհրաժեշտ է հուշարձանի հարակից տարածքում հուշարձանապատկան բեկորներ հայտնաբերելիս տեղեկացնել պատկան մարմիններին